Կարծիք

«ՀՀ 2019թ. պետական բյուջեով պետական իշխանության մարմինների համար նախատեսված պարգևատրման ֆոնդից աշխատողների պարգևատրման միասնական կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1. Նախագիծը հակասում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» 2013թ. ՀՀ օրենքին, որը հանդիսանում է ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտ: Այս օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ պետական ծառայողների պարգևատրման ֆոնդից պետական ծառայողների պարգևատրումն իրականացվում է **կիսամյակային հաշվետվությունների հիման վրա,** իսկ նույն հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից պետական ծառայողը հատուկ առաջադրանքների և (կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրվում է իր **մինչև մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով տարեկան ոչ ավելի քան 3 անգամ:** Մինչդեռ ներկայացված՝ ՀՀ կառավարության որոշման նախագծի պարգևատրման չափը կարող է սահմանվել աշխատողի պաշտոնային դրույքաչափի **200 տոկոսի չափով**:

Օրենքը սահմանում է պարգևավճարներ տալ **տարեկան ոչ ավելի քան 3 անգամ,** մինչդեռ ներկայացված նախագծի համաձայն դրանք կարող են **տրվել ամսական պարբերականությամբ:**

2. Նախագծի համաձայն՝ որոշման դրույթները անհասկանալի տրամաբանությամբ չեն տարածվում Ազգային անվտանգության ծառայությունում պարգևատրման հետ կապված հարաբերությունների վրա, ինչը որևէ կերպ հիմնավորված չէ:

3. Որոշմամբ կարգավորված չէ այն հարցը, թե աշխատանքի գնահատման ցուցիչներ սահմանող իրավական ակտն ինչ տարրեր պետք է պարունակի և ինչ սկզբունքով պետք է առաջնորդվի: Նման կարգավորման բացակայությունն իր մեջ պարունակում է կոռուպցիոն ռիսկեր, քանի որ գնահատման ցուցիչների սահմանումը նման դեպքում անխուսափելիորեն կկրի սուբյեկտիվ բնույթ:

4. Ներկայացված որոշման նախագծով սահմանված չէ նաև պարգևավճարների տրման իրավահարաբերությունների նկատմամբ հսկողության և վերահսկողության որևէ մեխանիզմ, այդ թվում՝ դրանց հրապարակման առումով:

5. Նախագծի 5-րդ կետով նշված է, որ պարգևատրման ցուցիչը այն նպատակային արդյունքն է, որն ակնկալվում է ստանալ համապատասխան աշխատողի կողմից կատարվող աշխատանքից՝ հաշվի առնելով աշխատողի կողմից կատարվող աշխատանքների բնույթը և բովանդակությունը: Կարծում ենք, որ անընդունելի է պարգևավճարները տալ

աշխատողներին իրենց պայմանագրով սահմանված աշխատանքը պատշաճ կատարելու դիմաց, որի համար արդեն իսկ նախատեսված է աշխատավարձ: Այդ համատեքստում անընդունելի է նաև ամսական պարգևատրման հնարավորությունը:

6. Կարծում ենք, որ նախագծի ընդունման արդյունքում ավելի վատթարանալու է պարգևավճարների տրման և պաշտոնյաների՝ դրանից կախվածության արատավոր պրակտիկան:

Հարկավոր է ամբողջությամբ վերանայել պետական ծառայողների պարգևատրման փիլիսոփայությունը և պարգևավճար նախատեսել միմիայն առանձին ծառայողների բացառիկ ու արտակարգ կատարողականի համար, դրան զուգահեռ բարձրացնելով աշխատավարձերը և ակնկալվող աշխատանքի/արդյունքի դիմաց սահմանելով արժանապատիվ վարձատրություն: Ծառայողին պարգևավճար պետք է տրվի միմիայն բացառիկ դեպքերում՝ պայմանագրային պարտավորություններով նախատեսվածից զգալիորեն ու անսպասելիորեն ավելին կամ որակյալ արդյունք ստեղծելու պարագայում:

Ինչ վերաբերում է ցուցիչներին, ապա դրանք հստակ և չափելի պետք է սահմանվեն պետական ծառայության բոլոր պաշտոնների համար՝ գնահատելու պայմանագրով սահմանված պարտականությունների նրանց կատարողականը առհասարակ, ոչ միայն պարգևատրման, այլև պաշտոնների առաջխաղացման և այլ (ոչ միայն ֆինանսական) խրախուսական նպատակներով: